

6tn

2064

ԳԵՈՐԳ ՏԼԻՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՅ

1999

# ՕՐԻՈՐԴ ՆԱԴԻԿ ԿԻԼԻԿԵԱՆ

(ԲՈՊԷՆԵՐ)

և.

ՅԱԿԵԼԻԱԾ (ԲԱՆԱՍՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ)



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ  
1890

Ltn  
2064




ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

# ՕՐԻՈՐԴ ՆԱԴԻԿ ԿԻԼԻԿԵԱՆ

(ԲՈՊԷՆԵՐ)

և

ՅԱԿԵԼԻԱԾ (ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵՆՑԻ

1890

42064-60

28 2064





Дозволено ценз. Тифлисъ, 5-го Марта 1890 г.  
Типогр. М. Д. Ротинянца, на Гол. пр. соб. д. № 41.

## ՕՐԻՈՐԴ ՆԱԴԻԿ ԿԻԼԻԿԵԱՆ

(Ր Ո Պ Է Ն Ե Ր)

Ընթերցողին:

Քաւ լիցի թէ ես ոչ իստակ սրտով  
Պատմում եմ քեզի Նաղիկիս կեանքը,  
Կամ թէ կանխակալ մտածմունքներով  
Գրում եմ անմեղ այս երկու խօսքը:

Գուցէ թէ կարծէք ուշիմ ընթերցող,  
Որ զէնք եմ տալիս ես պօղրո-գնէրէն,  
Որ հազար ու մի խօսքով բամբասող  
Յաւ տան քնքշացած անմեղ սրտերին:

Կամ որ կատիկը ասի Նաղիկին.  
«Այ, աչքդ զուրս դայ. տես, քո արարքը  
«Յայտնի է ամբողջ այս մեր քաղաքին.  
«Ուրիշ է ազնիւ իմ վարք ու բարքը»

Այդ չէ իմ միտքը. ինչո՞ւ նեղացնել  
Առանց զրան էլ նեղացած սրտեր.  
Մի անմեղ հաճոյք միայն պատճառել  
Գրած են անմեղ այս իմ օրուէներս:



ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

I

Օրիորդ Կիլիկեա՛ն. և ո՞վ չի ուզի,  
Որ իւր մականունն աչապէս որոտայ.  
Եւ ճառագայթը կըթութեան լուսի  
Փեսացուներին իրա մէջ ցոյց տայ:

Այս չէ ամենը. իմ օրիորդը  
Շնորհալի է և պերճ խօսքերի մէջ.  
Եւ հայկական նա խօսքի խորթը  
Զնջում է սէրի նամակների մէջ:

Գիտէ նա թիւը Բաժֆիի մահւան,  
Կամ երբ Պատկանեան եկաւ մեր քաղաք,  
Պահում է իրա սեղանի վրան  
Առանց կտրտիլ «Ոսկի Աքաղաղ»:

Գիտէ և պահել իրեն շատ բարձր  
Կառայելիքի պատուող շրջանում.  
Երբեմն էլ յոնքը կիտել շատ թանձր,  
Երբ հոգիքն է նա չի հաւանում:

Սիրում է նա խիստ նոր բժիշկներին.  
Հոգ չէ թէ կաւքով դեռ նա չի զբոսնում.  
Բաց հօ կարող է յաճախորդներին  
Ասել, թէ սիրտը ինչպէս է արօրում:

Կամ պօղրուզներից խիստ ծածուկ պահել  
Ատլաս-փառակազմ չիշատակարան,  
Ու ճիշդ թւերով, ճիշդ արձանազրել  
Տարին, ամիսը նրա աւարտման:

Երբեմն փակում մենակ սենեակում,  
Ու զգացած սրտից սէրի խօսքերը,  
Ուղղած բժշկին գրում տետրակում,  
Նորոգում սրտի մարած վշտերը:

Եւ տանջող թախիժ գունատ երեսի  
Երբեմն թափել թանաքի սևով.  
Մզել ցաւերը սիրսթափ սրտի  
Ոտանաւորի թեթև տողերով:—

«Ես հիւանդ եմ. բժիշկն ասեց—  
«Թէ այդ քու սև դարդիցն է.  
«Հոգիս, ասի, խիստ ջուզում է.  
«Ասեց. սրտի սէրիցն է:  
«Թէ ուզում ես, ասեց, հոգիս,  
«Մի եկու օր դու ապրես,  
«Ասիր խելօք երկու խօսքիս.  
«Աշխարհում բան չսիրես:  
«Ձէ, ասացի, ո՞ր խելօքը  
«Կուզէ թաղել կենդանի  
«Եւ բաց աչքի իր բոլորքը  
«Տեսնի վիհը տապանի  
«Թէ ուզում ես, ասեց, հոգիս,



«Մի երկու օր դու ապրես,  
«Ասիւր, խելօք երկու խօսքիս՝  
«—Աշխարհում բան չսիրես:

Երբեմն նստած մի բոման ձեռին  
Աչքերը ձգում ողորկ հայելուն.  
«Ախ, Տէր իմ Ասուած, վայր իմ գլխին.  
«Անցել է արդէն կեանքիս վառ գարուն:

«Բայց ի՞նչ յուսահատ տխուր կացութիւն,  
«Բաւ է վերջապէս տանջւել օրնիրուն.  
«Եւ տանը մնալ, ի՞նչ յիմարութիւն.  
«Հերիք անցկացնեմ գիշերն անքուն:

«Ախ հաճախ ջան, ասում է մօրը,  
«Ախ ի՞նչ է ասում ծերունկ պապիկս.  
«Մինչի որ տարին, մինչի որ օրը  
«Ուզում է թողնել նա ինձ անպաշտպան:

«Երբեմ գլուխը նրա պէս պապիկի,  
Ասում է «ախ» ով պառաւ Անանը.  
«Նեմի նաղիկը մի պօղիկի  
«Աղջիկ պիտ' լինէր և ոչ նրանը:

«Ինչ ունէր, չունէր աշխարհին բաժնեց  
«Քուռ ու փուռ արաւ կայք ու կայանքը,  
«Եսկ խեղճ նաղիկիս, պառաւն արտասուեց,  
«Զուգեցաւ շինել բահր ու բաժինքը:

## II

Այստեղ մի փոքր ես ներողութիւն  
Խնդրել ուզում եմ իմ կարգացողից,  
Պատմելու նրան—եւ ի՞նչ նեղութիւն,  
Նաղիկիս կեանքը իր մանկութիւնից:

Մանաւադ Զեղնից, օրիորդ կարգացող,  
Քաղաքավարի չէ ես էլ գիտեմ,  
Թէ կօմպլիմենտը սիրտը գրաւող  
Ի՞նչ տեղ և ի՞նչպէս պիտի գործածեմ:

Շատ տարի առաջ խուլ փողոցի վրայ  
Մի տուն անաւաղ կանգնած էր խարխուլ.  
Եւ խեղճ Արտուշը, այժմ պապաշա,  
Մանում էր թոկեր օրնիրուն անդուլ:

Համեստ գործի մէջ մեծ մանակցութիւն  
Ունէր Անանը, իր լծակիցը,  
Փոքրիկ նաղիկն էլ, ախ ինչ կոպտութիւն,  
Շինում էր կծիկ թոկի թելիցը:

Խիստ դանդաղ քայլով անց էին կենում  
Զարբաշ օրերի ձիք ձիք ժամերը.  
Թանկ զնահատել ոչ դք չի ուզում  
Ամբողջ շաբաթւայ մանած թոկերը:

Բայց երբ է մնացել երկինք միշտ թխպոտ.  
«Գիտեմ ի՞նչ, ա կնիկ, մեր թապաւորը



«Յայտնելէ է կռիւ թուրքերին կեղտոտ,  
«Այսպէս է խօսում փողոցաւորը:

Պատերազմ: Ել ի՞նչ լաւ բան սրանից.  
Իւղոտ պատառներ. և ո՞վ է դժւել  
Ոսկիներ թողած կաշեւ տան պատից  
Ու շատ մանեղուց հալւել ու մաշւել:

Եւ ի՞նչ հարկ երկար ասել հո՛ւ ու ո՛ւ,  
Փորձել պիտ գիտնալ ամեն տեղ բաղդը.  
«Ա կնիկ, ասում է Արտուշն իր կնոջ,  
«Գիտես, թէ ինչ է իմ սրտիս դարդը:

«Ծաղիկ Նաղիկս ուրիշ ում յանձնեմ.  
«Դու ու քու Աստուած աղիգ կպահես.  
«Թէ որ բաներս լաւ կարգի բերեմ,  
«Իմ մարդութիւնս յետոյ կը տեսնես:

Անցաւ վեց ամիս: Քաղցած ու ծարաւ  
Մայր ու աղջիկը նայումեն դրան,  
Թէ ահա շուտով սգալի համբաւ  
Պիտի ստանան Արտուշի մահւան:

Բայց ի՞նչ հարկ խօսել դաժան մահիցը.  
Կրկին մի շաբաթ. և տան տէրտէրը  
Գալիս է ուրախ շտապով ժամիցը  
Ու տալիս մօրը շլացնող թղթերը:

Բաց այս բոլորից, մի երկար նամակ  
Ուղղում է Արտուշ սիրած ամուսնուն.  
Եւ հրամայում է Տի երեք սենեակ  
Վարձեն ու սպասեն իրեն դառնալուն:

### III

Նորոգւած կեանքը յուսատու ձայնով  
Հոսում է առաջ քրքիջով ուրախ  
Եւ Արտուշ աղան իր աստ հազարով  
Մեծ տեղ է բռնել շուկայում անվախ:

Իմերել ծառան սպասաւորում է  
Նրա տնումը օրնիրուն կանգնած.  
Եւ Լիսինովին համբաւ տանում է,  
Թէ դէյրի տիւրնիւր լաւ չի կպցրած:

Իմ օրիորդը տաս տարեկան է,  
Ֆրանս տիրացուն սպասում է տնում.  
Իր գիտեցածից նա բաւական է.  
Տիրացւի խօսքին նա շատ չի լսում:

Եւ ի՞նչ զւարճութիւն միշտ միատեսակ  
Սառած երեսին նայել ու նայել.  
Եւ երբեմն էլ խօսքերով տափակ  
Նկատողութիւն նրանից ընդունել:

Կամ թէ միշտ անհամ լսել պատումներ  
Քելեխների ու մեռելի մասին.



Եւ թէ յանդուգն մղղոսիները  
Պապինկի պալտօն ինչպէս պատուեցին:

Բայց իմ Նաղիկս հրեշտակ աննման  
Դարձել է Աստծոյ ծառայի համար.  
Սա սէրի երգեր յանդով բազմազան  
Նւիրում է նրան թւով անհամար:

Բայց կատակների-ինչ յանդնութիւն—  
Զիմանալ բնաւ տեղն ու ժամը:  
Եւ Արտուշ աղան-ինչ համբերութիւն—  
Քաշում անխնայ տիրացւի ծամը:

#### IV.

Եւ մինչ այս մինչ այն, օրերն անցնում են  
Ոսկիք ծովի պէս տաս հազարի վրայ  
Կախարդող թւով արագ բալւում են.  
Բոլորը հալալ Աստուած է վկայ:

Շուկան որոտում. Արտեմ Կիլիկեան,  
Արտեմ Մինէիչ, ախ ներողութիւն.  
Զէ որ կախարդիչ իշն այժմեան  
Ունի ազդեցիկ նշանակութիւն:

Բայց դիւր չի գալիս Արտեմ Մինէիչին  
Զկան զգւելի մանր առւտուրը,  
Պրօսպեկտ է իջել փառք իր Արարչին,  
Այստեղ էլ յաջող կտրում է թուրը:

Փառահեղ քոյեալ մեծ զահլիճումը  
Ճօճում է օդը բիւր ելեէջով.  
Ճօ-ից Ճօ թռչում մի վայրկեանումը  
Նաղիկս մատերը արագ շարժիւնով:

Հլու լակէջը երկու միրուքով  
Բերում է կօֆէ «հրամեցէք» անում.  
Եւ ռուսի քոծը՝ դող դող քայլերով  
Թաշկինակները դուխով սրսկում:

Եւ մի համեստ կառք սևուկ ձիերով  
Կանգնած սպասում է դրան առաջին,  
Տիկին, օրիորդ թաւիշ շորերով  
Վիլիս զնալու այնտեղից իջին:

Սենեակի պօռնան վերից ճղքւում է  
Իր անդութ փոքրիկ տիրուհու վրայ.  
Որ առանց իրեն մօտ հետ դնում է.  
Ամուր փակելով դուռը իր վրայ:

#### V

Անցաւ ամառը և աշուն թղպոտ,  
Առաջին ձիւնը թափւում է առատ.  
Եւ լայն փողոցով ձիւն ու սառուցոտ  
Շքեղ սահնակներ վազում են ազատ:

Եւ մուշտակներում խիստ պինդ փաթաթւած,  
Սահում են ծերուկ ազնիւ պարոններ.



Բուք ու ցրտիցը կարծես հալածւած,  
Շտապում են դէպի զւարճութեան տներ:

Նաղիկիս սիրտը յուզւում է վշտից.  
Արդէն յոգնել է երկար սպասելուց.  
Գէթ մի երկու խօսք իրա պարտքից,  
Թէ չեմ կարող գալ զլսիս ցաւելուց:

Իզուր ոռւս քոծը հանգստանում է.  
Թէ ինչո՞ւ զրգռել փափուկ ներքիւ.  
Եւ յետոյ կարծես յիշեցնում է,  
Թէ չէ սովորել վաղւան դասերը:

Թուլացաւ սիրտը, դողում է շրթունք,  
Մարտի ահը շատ ունի սրտում.  
Նաղիկս ակամայ, ո՛հ անմիտ զբաղմունք,  
«Pardon» և «Merci» նորից է սերտում:

Իսկ դձուրսը, դձուրսը, սահնակների մէջ,  
Առօք ու փառօք նստած են մարդիկ.  
Ա՛յ, տե՛ս, Կատիկնէլ իր պարտքի հետ  
Գնում է, վա՛յ քե՛զ, խե՛ղճ անբաղդ Նաղիկ:

Տրաքւում է ջգրից. նա նոր յիշում է,  
Թէ որքան բարի էր Ֆրանսո տիրացուն.  
Իսկ նոր մաղամի առատ ծորում է  
Դէմքից մեծ պասի դառը ձէթացուն:

«Պապինկա՛, լսիր, քու հոգուն մեռնեմ,  
«Արցունքն երեսին դիմում է ծնողին,  
«Ինչո՞ւ չես ուղում, որ ես սովորեմ  
«Գիմնագիտի ուսումն անդին:

# VI

Ռուս Գիմնագիտի՛ն: Ահա և եկան  
Պառաւ մաղամը և իր սանիկը.  
Խօսքեր բաղմազան և խրատական  
Լսում է նրանից քնքոյշ Նաղիկը:

«Ահա՛ քեզ կաճառ դիտութեան ծովի,  
«Ուր շնորհքով աղջիկ կարէ զարգանալ.  
«Իսկ այնուհետեւ նա առանց ցաւի  
«Կարէ հեշտ ճարել բժիշկ, գենրալ:

«Եւ այնուհետեւ, լսիր իմ հոգիս,  
«Թե թեի տւած Պետերբուրգ գնալ,  
«Մոռանալ անգամ քո կեղտոտ Թիֆլիզ,  
«Եւ յաւիտեանս այստեղ չը դառնալ:

Այսպէս խրատուեսց պառաւ մաղամը,  
Նաղիկիս սիրտը լցրեց յոյսերով.  
Թէպէտ բժշկի դեռ չզիտէ համը,  
Բայց թէ Պետերբուրգ կերթայ մեծ յուսով:

Բայց չէ ժամանակ մտածել այս բան.  
Հարկէ հարցերին տալ մի գոհացում:



Եւ պատասխան տալ միշտ միանման,  
Թէ Կիլիկեան են իրան անւանում:

## VII

Կրկին սառ ձմեռ:

Մրափում է բնութիւն մէջ իր խոր քնի,  
Լրացած լուսնի արծաթ ճաճանչներ  
Փայլեցնում են բիւրեղը ձիւնի:

Բայց հեռու քունը, հեռու և սառուց.  
Սէրող սրտերին չեն մօտիկ սրանք,  
Թէկուզ լուսինը դադրի փայլելուց  
Եռող արեանը ի՞նչ մի մեծ զրկանք:

Բայց տես Նադիկիս քունն էլ չի տանում.  
Նա ծոյլ թերթում է պատմութեան գիրքը.  
Եւ խիստ անհամբեր սրտով սպասում,  
Թէ ե՛րբ պիտի քնի՝ անգութ հայրիկը:

Ահա և եկաւ ցանկալի րոպէն.  
Ծերուկը քնեց. ոչ ոք չի տեսնում.  
Մի խիստ նուրբ ծրար Ֆրանսերէն զբօսէ,  
Հանում է շտապ ու արագ կարդում:

«O ты ангелъ мой»... դողում է Նադիկ,  
Մի սարօրինակ ցնցում զգում է.  
Եւ լցւած սրտով, քայլերով նազիկ  
Սենեակի միջով անց ու դարձնում է:

Անում է գրիչ, ձեռքը թուլանում,  
Ծալում է թուղթը, հանգչում է լամպար.  
Եւ միայն դժգոյն իր շրթունքներում  
Փայլում են մրմունջ սէրի անհամար:

Թողնենք նա քնի և կամ մտածի  
Նշանակելու տեսութեան րոպէն,  
Իսկ մենք զիտենանք սոսկ հարեանցի,  
Որ նա չի անցել տասնութ տարիէն:

## VIII

Բայց մինչև այժմ տիկին Անանուց  
Ոչինչ չեմ պատմել ես կարդացողին.  
Թէ ի՞նչ համ ու հոտ տեսնում էր մարդուց  
Կամ ի՞նչ աչքով էր նայում աշխարհին:

Աշխարհ ասացի, թէկուզ ամենը  
Մեռնեն մի ժամում, հոգ չէ Անանու,  
Ռուս հարեանի միայն թէ կինը  
Յոյց տայ հնարը մարդուն թալնելու:

Եւ այս արհեստում խիստ յառաջադէմ  
Արել է քայլեր տիկին Կիլիկեան.  
Այնպէս որ այժմ խիստ ուրախադէմ  
Կարէ գուշակել արդիւնքը վաղւան:

Իսկ Արտեմ աղան մի գառն է խոնարհ,  
Մի շատ բարեսիրտ Անանու համար.



Ոչինչ չի խնայում, այդ գիտէ աշխարհ,  
Շուտ կատարելու հաճոյքն անհամար:

Օրիորդ Նադիկս մեծ մասնակցութիւն  
Ունի արդիւնքից իրա մամլինկի,  
Միայն թէ պահի խիստ մեծ զգուշութիւն  
Անունը տալիս տանու ծեր «դրուգի»:

Խիստ մեծ զգուշութիւն. խորհրդաւոր խօսք,  
Բայց տես որ կլուքում սրախօսութիւն  
Դէմ չինոյնիկի. կամ թէ ակնարկ սոսկ  
Ուղղած Անանին: Սիրահարութիւն:

Եւ հարկ համարեց, Արտեմ Մինէի:  
Գլուխ բարձրացնել դաւթարի վրից,  
Ու, ինչպէս հմուտ փաստաբան կտրիճ,  
Ուղեց վերցնել կեղտը իրանից:

«Լսի՛ր ինձ, լսի՛ր, զրանից ի՞նչ օգուտ,  
Ասում է ծերուկ տանու քահանան,  
«Ի՞նչ թեթեւութիւն մարմնուդ կամ հոգուդ,  
«Թէ ուրիշ տանես զրած պրօշէնի»:

«Կամ թէ մտածի՛ր, Արտեմ Մինէի:  
«Թէ ո՞ր խելօքը աշխարհի վրայ  
«Բան կը հասկանայ այդ բամբասանքից  
«Եւ կամ թէ կասի վատը բո՛ կնկայ:

Նորից իմ աղան իր դաւթարի հետ  
Տեսնում է գործը խիստ մտածելով,  
Տիկին Անանը իւղով հոտաւետ  
Օծում է ծամը հազար բերկրանքով:

Երբեմն կանգնած իր ննջարանում  
Իր Նադիկի հետ խօսում է սիրով,  
Եւ ամսական զինը որոշում  
Նադիկիս Կոտեքի խիստ անուշ հոտով:

## IX

Ամբողջ վեց տարի անցել է արդէն  
Այն անհոգ օրից, երբ պառաւ տիկին  
Բռնած Նադիկիս քնքոյշ կռնակէն  
Յանձնեց մեծ յուսով զիմնազիօնին:

Արդէն նա գիտէ իր ուսմունքի հետ  
Հարկաւոր բաներ սիրելու համար,  
Երբէք չի կորել մտքիցն անհետ  
Խառակ վարժուհու ձեւերն անհամար:

Պուշկինից անգիր Եպիֆանիէ  
Սովրել է փոքրիկ կաւալերներից,  
Եւ սէրի կեղտոտ ոտանաւորներ  
Արտագրած ունի նրանց տետրակից:

Մի պատկառելի թւով նամակներ  
Կարող է ցոյց տալ վանից ու Կոլից,



Որով այս պատիկ երկրպագուններ  
Առաջարկում են փախչել հօր անից: —

Փախչել անուսում, քահանայ հօրից —  
Գուցէ և սառը Надзиратель-ից,  
Կամ երկար ու հաստ միաւորներից —  
Եւ ապրել հեռու հոտած քաղաքից:

Ձորս անգամ սիրեց, չորս անգամ թողեց.  
Կլասիկ, ռէալիստ այրած են նրանից,  
Այժմ կպելէ նա պօրո-չին.  
Դպրոցից հանել խնդրում է հօրից:

Տրաքւում է մայրը սրտի ջգրիցը,  
«Ի՛նչ կասեն խալը, թէ Կիլիկովի  
«Նադիկ աղջիկը թողեց դպրոցը.  
«Ել ո՞վ սիրելով քեզ կը բարեխ:

Ձի ուղում լսել, ո՞չ մօր խնդիրը,  
Ո՛չ հօրը շատ խիստ պատւիրած հրաման.  
Գլուխը ցաւում է, ընկնում է զիրքը  
Սիրտը յուզւում է դարդով բազմազան:

«Ես ջուրը կընկնեմ», խօսում է նա խիստ,  
Մայրը դողում է, միտքը մոլորւում  
Եւ ապա կրկին սրտով անհանգիստ  
Քաղցր խօսքերով նրան գուրգուրում:

X

Հայկական թատրոն.  
Բերանից բերան թռչում հաճոյքով.  
Լուսաւորութեան վառվռուն կերոն  
Ներկայանում է նա իրա շքով:

Եւ Աղամեանը բռնել է իր տեղ.  
Որոտում է բեմ. «Համլէտ», «Արքայ-լիր»  
Պսակներ կարկտի պէս խիստ շատ փառահեղ  
Ընդունում է նա դէմքով սիրալիր:

Ձմեռն անցաւ, թէպէտ չի անցել,  
Երգում է Վիրգին. Օ՛, հայ քնքոյշներ,  
Փեսացուներին ինչն է շլացրել.  
Ել ձեզ չեն նայում սաթէ բիսօկէր:

Անճասն չի մնում Նադիկս հաճոյքից.  
Հայկական բեմը կախարդել է նրան.  
Ա՛խ, ի՛նչպէս կուզի թռչել օթեակից  
Եւ ներկայացնել ցնորած Օֆելիան:

Բայց դեռ չը գիտէ մայրենի խօսքի  
Հազար մի տեսակ թոթովանքները,  
Տանում է պահանջներու պատիւն,  
Թէ պիտի կարդամ հայոց գրերը:

Մնաս բարով յաւէտ, ջահիլ պօրո-չին,  
Ել դու չես կարող Նադիկիս սրտում



Ունենալու գէթ անկիւն մի փոքրիկ.  
Նա՛ գէպ մի ուրիշ կեանք է սլանում:

# XI

«0', Pardon, pardon, սիրելի կատիկ,  
«Ես չը կարացայ քեզ լաւ ճանաչել.  
«Ի՞նչպէս ես հոգիս, անմահ քոյրիկ,  
«Գիմնադիօնը դեռ չեմ աւարտել:

Հէնց այդ խօսքերով դիմաւորում է  
Քնքոյշ Նազիկա իրա պօղբուգին,  
Եւ խօսքերի մէջ միշտ ակնարկում է,  
Թէ շատ չի լսում ֆլեթ պապիկին:

Եւ ցոյց է տալիս անթիւ նամակներ  
Իբ թատրոնական երկրպագուից,  
Որում գրում է շատ օճախման,  
Թէ նա սերում է մի աղնիւ ցեղից:

Խեղճ հայրենիքի ազատիչ հրեշտակ  
Տեսնում են նրանք Նիլիկեան խօսքում,  
Եւ գովասանք խիստ շատ ու անտակ  
Մեծ տեղ են բռնում հայացած սրտում:

Նքեղ, փառակազմ ալբոմի միջին  
Բազմած են ոյժեր հայ թատրոնական.  
Ահա Աղամեան, ահա և Վիրգին,  
Ահա տէր-Դաւթեան, ահա Մնակեան:

«Բայց մարգարիտներ չէ հարկ շուայել.  
«Խոզերի համար չունին նրանք զին,  
«Եւ իմ պապիկն չի ուզում լսել,  
«Թէ հայեր շքեղ մի անցեալ ունին:

Բայց հերկը, հերկը պապիկն գործեր,  
Երկմիրութ լակէ բերել է կօֆէ,  
Հարկէ մի երկու վերցնել բլիթներ  
Եւ ճիշդ համոզել, որ շատ համով է:

## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

### I

Անտառը քիչ-քիչ մէգից վաղորդեան  
Հանում է գլուխը արեւի դիմաց,  
Յուսատու խինդով օդը ամուսն  
Ճօճում է ծառը և թուփը կամաց:

Զարթել է երգը, աղմկում անտառ,  
Քրքջում է մեղմ փոքրիկ Բօթօմկան,  
Մամապատ ափին զոյգեր սիրահար  
Եկան շուայել խօսքեր սիրական:

Եւ Միներիալնի պարկում վստում են  
Ամեղ թիթուիկներ որոնող սէրի,  
Թախիծ վաղաժամ նրանց երեսէն  
Զէ փախցնում խոստում թունդ ֆուֆլէրի:



Ահա և դեղնած հիւանդ սուերներ  
Ղողղող քայլերով զբօսնում են այնտեղ.  
Եւ հաստափոր հարուստ պարոններ  
Իրենց ձանձրութիւն կոտորում են այստեղ:

Այս տեղում եկաւ և հերոսուհիս.  
Փայլել, ճաշակել նոր կեանք, նոր բարիք,  
Նոր յուզմունք, նոր խինդ ժպտող աշխարհիս.  
Գուցէ 'ւ անխուսափ կեանքի դառ կարիք:

## II

Արտեմ Մինէիչ ողջ հիւանդացած,  
Եկել է այստեղ ճիշդ կառարելու  
Գիտութեան խօսքը, բժշկի ասած,  
Եւ ողջ ու առողջ քաղաք դառնալու:

Ամեն առաւօտ փայտի վրայ յենւած,  
Նա դուրս է գալիս բնութեան զիրկը,  
Տեսնելու իրա մարդիկը սիրած,  
Նրանց բանալու իր դարդոտ սիրտը:

Օ', հոգսեր, հոգսեր. և ո՞վ չունի դարդ.  
Գիծ-գիծ օրերը անցնում են շուտով.  
Մահաւան նշաններ, ինչպէս ուժեղ կարթ,  
Խոցում են սիրտը անողորմ խայթով:

Եւ Ռեմերուսկի պարէլում շատ յաճախ  
Վաղեմի ծանօթ իր բարեկամի

Պատահում է նա հայեացքին անվախ,  
Կարծես սև մահի կատաղ թշնամի:

«Արգնա Նիկիտիչ, ինչիցն է, որ փուչ  
«Աշխարհիս վրայ մինը խիստ փարթամ,  
«Միւս՝ թունդ ցաւից հազիւ թէ կուչ-կուչ  
«Կարողանում է մանգալ շատ անգամ:

Բաց այս խօսքերին հազիւ թէ կարար  
ձիշտ պատասխանել իր ծանօթ կրեստս.  
Միայն ժպիտով ոչ հանգստարար  
Ձեանցնում էր այտերին ախօս:

## III

Արդաս Նիկիտիչ իր ոսկիներով  
Ֆայտնի էր ամբողջ Թիֆլիս քաղաքին.  
Շատերը նրան քաղցր խօսքերով  
Շողոքորթում 'ին, հնազանդում կամքին:

Թէ ինտելեգենտ հմուտ փաստաբան,  
Թէ յայտնի տեսակ խմբագիր տնօրէն,  
Ամենը մի տեղ խմբով միաբան  
Հանում են նրան գլխարկը գլխէն:

Նոյն իսկ երկմիրուք ազնիւ ինժիներ  
Քծնում է նրա շուրջ խղճուկ ժպիտով,  
Եւ պատահական ոսկու կտորներ  
Դնում է գրպան անսանձ հաճոյքով:



Միայն իր գոռոզ երեք տղաներ  
Ձեն ուզում տեսնել նրա արժանիք,  
Ազա հաշուում են նրա կեանքի ժամեր.  
Շուտով ստանալ ուզում են ոսկիք:

Այդպէս չի նայում Արզաս Նիկիտիչ  
Իր դառ քրտնքի մեծ վաստակներին.  
Ուզում է խաղալ նա խաղը «փփփ»  
Կտակել, ընծայել, շահել իր աղբին:  
Հինգ տարի կըլնի, որ նոստարիումի  
Չափում է ճամբան Թիֆլիզի աղան.  
Լսում է խորհուրդ եպիսկոպոսի  
Ի հասին գործոյ աղբախաչան:

«Տանը որ տղան քաղցածութիւնից  
«Տանջւելիս լինի թունդ զկռտալով,  
«Դուրսը նւէրը լոկ փառքի սերից  
«Ձը պիտի ձգւի չմտածելով:

Այսպէս խօսում էր ամբողջ ընտանիք,  
Թունդ մօրակելով ծերուկի արարք.  
Թէ կինը սիրող, թէ գոռոզ որդիք  
Դրանում տեսնում 'ին մի դառը վտանգ:

#### IV

Երեք աղաների, երեք աղջկայ  
Հայրիկ կուշում է Արզաս Նիկիտիչ:

Ոչ մինից աղան, յայտ է աշկարա  
Երբէք չի լսել մի խօսք ըստփիչ:

Համալսարանի երկրորդ բաժինից  
Մեծ որդուն անդարձ վաղ վռնեցին.  
Հոգատար ծնողներ, փչանալու ահից,  
Շնչից սիրուն կնիկ կապեցին:

Եւ ով չի ուզում մեր ժամանակում  
Մի այսպէս բարի հայրիկ ունենալ,  
Պատրաստի փողով, պատրաստի տնում  
Քաղցր անգործութեամբ խիստ կուշտ քնանալ:

Բայց այն երջանիկ օրիցն արդէն  
Քսան ամբողջ տարի սահել է զնացել.  
Չորս չարածճի հօրը փեշերէն,  
Ինչպէս տղրուկներ ամուր են կպել:

Մի փաքը սփոփանք ծերուկի համար,  
Կարծէք ուզում լինել միջակ աղան.  
Միայն նրան է գործերն անհամար  
Հաւատում յանձնում մեր ծերուկ աղան:

«Անառակ որդի, Աստուծո անիծած,  
«Մի քիչ քեզ կարգին չը գիտես պահել.  
«Փրանցող-թանջների հետեից ընկած,  
«Ուզում ես դատած փողերս ուտել:



Միշտ այս խօսքերով իր երրորդ տղին  
Յանդիմանում էր Արգաս Նիկիտիչ:  
Իսկ ~~անտեսել~~ իրա հայրիկի  
Զէր էլ վախենում թու՛նդ անէծքներից:

Մեծ հպարտութեամբ, քաղցր ժպիտով  
Յիշում է ծերուկ աւագ աղջկան,  
Բաղդաւոր, հարուստ, չորս հինգ չիներով  
Յաճախում է նրան վոյննի փեսան:

Երկրորդ աղջիկը անյայտութեան մէջ  
կորել է, մարդուց ծածուկ փախչելով.  
Նրանց տանու «ДРУГЪ» նրան փախցրեց,  
Նահապետական կարգը ծաղրելով:

Օրիորդ Նաթանեան, իր երրորդ դուստրը,  
Արդէն թարմացնող թանկագին դեղով  
Օժուժ է հնացած-թառամած թշեր,  
Սիրտը լցնում է պառաւ հառաչով:

Սրանց հետ ահա կազմ և պատրաստ  
Արզաս Նիկիտիչ եկել էր Բօրժում,  
Եւ մի սեղանից սրտովը կէս-հաշտ  
Ուտում է, խմում օրերն անցնում:

Ա'խ, ասիական ես կոպտութիւնով  
Մոռացայ ճիշեւ տիկին Սալօմին,

**Բայց որ պատկերը լրանալ էՔՔհնարով,  
Դենեք վերջումը ծերի տիկինին:**

## V

Թէ արիւորներու և թէ բոլորս  
 Խառնոււմ են շփոթոււմ մեր ժամանակում:  
 Ի՜նչ զարմանք, որ միշտ եղբարք Նաթանեան  
 Իրանց առաջին կարգումն են դնում:

Ել յետ չեն նայում հոտած անցեալին,  
Թուևդ-Թուևդ պահանջներ անում են հօրից,  
Թէ մաշած շորով արիւտութեամբ  
Զի սագրում դուրս գալ շքեղ պօրեղբայր:

Եւ ծխածանի գունաւոր թղթեր  
Միշտ պահանջում են հօր դանձարանից.  
Շլացնել կողքին հարսնացու աչեր,  
Որ երսուն հազար ֆլէշ նրանց հօրից:

„Սուտ խօսէ ասած, թէ որդին մօրից  
„Միշտ փշանում է, աններես զառնում,  
Տրտնջում էր միշտ՝ Արզաս Նիկիտիչ  
Եւ բարկութիւնը կնոջ վրայ թափում:

„Յերացել պրծել խելքդ-կորցրել ես.  
 „Դեռ չես հասկանում—քու «Բիշի»  
 „Զպիտի ներէ, որ դու սառներես  
 „Գէթ երկու աղի մերժես Կէնի»։



Այսպէս կնախատէր տիկին Սալամէն  
Իր ծերուկ մարդու ստոր ժլատութիւն.  
Եւ յետոյ կրկին սիրտը շահելէն  
Մեղմացնում էր նրա բարկութիւն:

VI

Նախնեաները Կիլիկեաներին  
Դեռ ևս քաղքում ճանաչում էին,  
Եւ եղբայրները կլուբի պարերին  
Նաղիկի հետը սիրով պարում 'ին:

Ահա նեղ շրջան, ուր աւելի մօտ  
Կարեն նրանք շփուել, խօսել ու դատել,  
Եւ անտառային քաղցր առաւօտ  
Ուրախ յուզմունքով միասին անցկացնել:

Պատահում էր, որ երկու ընտանիք  
Շար շար կառքերով դնում 'ին Լիկան,  
Կամ եղբայրները ղոպէներ քաղցրիկ  
Անցկացնում էին տանը Կիլիկեան:

Սկզբում երկու եղբարք միասին  
Իրանց քոյրիկին առնում 'ին տանում,  
(Պարկերի) ծայրին սպասում Նաղիկին,  
Այնտեղից միասին դէպ անտառ քաշում:

Իսկ յետոյ արդէն կեղտաշորի պէս  
Օրիորդ քոյրիկին միմեանց վրայ ձգում:

Ոչ մինը նրանցից քնքոյշ Նաղիկէս  
Աչքը վերցնել անդամ չի ուզում:

Եկաւ և ժամը, երբ երկու եղբարք  
Հարկ համարեցին հաշիւը պարզել,  
Թէ ումի՞ կերպը, կամ որի՞ արարք  
Նաղիկի սիրտը ամուր է գրաւել:


Իաց բաց աչքերով երկմտութեան մէջ  
Նայում են նրանք նրա շրթունքին,  
Գէթ սուերը սէրի իր խօսքերի մէջ  
Վերջացնէ լարած դատը երկուքին:

VII

Անցնում են օրեր ուրախ ժպիտով,  
Ինչպէս ցնորքը բորբոքող սէրի.  
Լցնում են կուրծքը Նաղիկի խինթով,  
Ջերմ ջերմ խօսքերը հաւաքելով:

Եւ նա զգում է իրան միապետ  
Տասնեակ ստրկացած հլու սրտերի.  
Երբէք չեն կորչում մտքիցն անհետ  
Քաղցր խօսքերը հաւաքելով:

Իաց պաշտօնական ձև առաջարկի  
Մերժում է նա խիստ երես թեքելով,  
Թէ չի կեղտոտուել դեռ սիրտ Նաղիկի,  
Որ մինին սիրի ոսկիի հաշուով:





Միայն Վալօղիան, փոքր նաթանեան,  
Երևում է նրան ամենից տարբեր.  
Օ', ինչ սուր խօսքով, — խիստ նախատական —  
Ծաղրում է ստոր սէրի հաշիւներ:

Եւ օրիորդս միայն նրանում  
Յոյս ունի գտնել ճշմարիտ պաշտող.  
Ժամերն անցրած նրա հետ անտառում  
Յիշում է նա միշտ շրթունքով դողդող:

Անգուսպ ցնորքը երև'կայութեան  
Վխտում է մտքում վայրի յուզմունքով,  
Եւ պայծառ երազ օրիորդ Վիլիկեան  
Տեսնում է յաճախ լիքը բերկրանքով:

Ահա կատարին նա սարի կանգնած  
Դիտում է տեսքը ուրախ Բօրթօմի.  
Ծառերն ամեն միմեանց փաթաթած,  
Կարծես փափսում սէր հազար ու մի:

Եւ մի աշտարակ ծառերի միջից  
Լուսեղէն սիւնով բարձրանում է վեր,  
Եւ տես. Վալօղիան նրա կատարից  
Արձակում նրան օդի համբոյրներ:

Պատկերը փոխւեց. մայրենի Թիֆլիզ,  
Կլուբի դահլիճը խիստ լուսաւորւած,

Թռչում է կարծէք օդում պարելիս  
Վալօղիան իրա կոնիցը բռնած:

Բացք վնչ, անզգոյշ ընկնում են նոքա,  
Աչքը բանում է օրիորդ Վիլիկեան  
Եւ միայ բռնած ձեռքումը իրա  
Տեսնում է ապուշ Զօլաչի բօման:

Վխտում է երգը սէրի բորբոքող  
Անգուսպ զգացմունքով իր հպարտ կրծքից,  
Եւ խոշոր աչեր այրւող բորբոքող  
Լցւում են կրակով Վալօղի սէրից:

„Ա'խ ես սիրում եմ իմ Անտունետ,  
Լսում է նրան իր գուլբերնանտկան,  
„Օ', ինչպէս կուզեմ Վալօղիայի հետ  
„Անցկացնել օրեր նորածին զարնան:

„Նախ օրիորդ, մի՛ քնքոյշ սրտիդ  
„Յուզիր կրակը, այրիր պարզ աչեր.  
„Եւ ոչ թռիչքով խօսքերի սէրիդ  
„Դողացրու անփոթ թարակ շրթունքներ:

„Զուգեմ ես կեղծել իմ մաղրմուռեղ.  
„Եւ ինչպէս թագցնեմ սրտիս զգացմունքներ  
„Օ', լսիր, լսիր. ժամ է նրան ասել...  
„Բացք ինչ են ասում հոգատար ծնողներ:



„О! ПЛЕВАТЬ НА ВСѢХЪ, ասա ինձ փռթով:  
 „Կարե՞մ ես սիրել նրան յաւիտեան,  
 „Եւ օրեր քաղցր, օրեր անլրդով  
 „Կարող է անցնել ինձ հետ Վալօդիան:

Փախչում է քունը և ամբողջ գիշեր  
 Արթուն երազում հրապուրիչ պատկերք:  
 Սէրի խիստ շուտ շուտ ցնորքի ցայտեր  
 Սրտում գեղգեղում հազար տաղ ու երգ:

### VIII

„Բարե օրիորդ“ „բարե Վալօդիա“  
 „Ձե՞ք տեսիլ քոյրիս հովանոցի տակ“:  
 „Ա՛յո Վալօդիա, она шла туда,  
 „Խղճում եմ նրան, ախ խեղճ նահատակ“:

„Այո՛, նահատակ. և այդ իր խեղճից-  
 „Եւ ինչո՞ւ մերժեց իմ քնքոյշ քոյրիկ,  
 „Երբ Ռուսաստանի մայրաքաղաքից  
 „Առաջարկում էր իր ձեռք պարտաւի:

„Ո՞վ գիտէ, գուցէ հազար սև մոքեր  
 „Ասում՝ ին նրան, որ նա բաղդաւոր  
 „Ձէ կարող անցնել քաղցր, ուրախ ժամեր  
 „Իրա պաշտողի հետը զինաւոր:

„Ո՛չ, այդ չէր պատճառ, այլ որ փեսացուն,  
 „Ինչպէս մի նեմեց, պիտի ենթադրել,

„Թէ կը պահանջէր, որ իր հարսնացուն  
 „Merci խօսքի տեղ danke գործ ածէր:

„Merci և danke մեծ տարբերութիւն  
 „Ունին անկասկած, բայց որ Սօփիկօն  
 „Ունենար փոքրիկ խորամանկութիւն,  
 „Նրան կը սովորցնէր հայկական աշոն:

„Այո՛, թէ մարդն էլ խօսքովը կնոջ  
 „Երթալու լինէր, առանց մտածել,  
 „Եւ իրա կոպիտ լեզուովը deutsch՝  
 „Հայկական այսն չը ոչընչացնէր:

„Բացի դրանից հէնց Սօփիկօն էլ  
 „Ձի սիրում շատ խիստ խօսքը հայերէն,  
 „Եւ ասում է միշտ. — հայ հեղինակներ  
 „Արտագրում են դիւի Փրանսերէն գրքէն:

„Ասենք հայերէն ես շատ չեմ կարդում,  
 „Բայց ինչքան դիտեմ ես աֆիշայից,  
 „Ի՞նչ անում ինչպէս տեղեակ մարդիկն են ասում —  
 „Համէ՛ն թարգմանեց անգլիերէնից:

„Բայց այդ ոչ մի փաստ չի կարող լինել,  
 „Թէ հայեր իրենց լեզուով մայրենի  
 „Չպիտի խօսեն, թէ հեղինակներ  
 „Շատ կարիք ունին մէջ Փրանսերէնի:



„Բայց դուք, օրինակ, ինչպէս էք կարծում,  
 „Թէ արիստոկրատ ընտանիքներին  
 „Կը սազի՞ արդեօք իրանց շրջանում  
 „Խիստ ամուր կաշել մեր հայերենին:  
 „Նոյն իսկ վերցրէք հոգաբարձուներ,  
 „Կամ հայ թերթերի շատ խմբագիրներ,  
 „Տանը վարձում են գուլերնանտկաներ,  
 „Որոնք չեն ճանչնում հայկական տառեր:  
 „Եւ այդ նրա համար, որ այդ մարդիկը  
 „Գիտեն, որ վաղը և կամ միւս օր  
 „Խիստ նշանաւոր հացի կարիքը  
 „Պիտի հայ լեզւին ասի քաղցր օր օր:  
 „Ասացէք խնդրեմ, սերենադաներ  
 „Կը գրէի՞ արդեօք հայերէն խօսքով,  
 „Կամ թէ քնքշացած մեր օրիորդներ  
 „Կը երգեն նրան քաղցր զգացմունքով:  
 „Թողնենք Վալօդիա այս խօսակցութիւն,  
 „Դուք ինձ ասացէք, թէ ձեր Սոփիկօն  
 „Ձէ՞ որ զգում է միշտ մենակութիւն—  
 „Ես այդ նկատեցի երեկ իրիկուն:  
 „Ի հարկէ որ մենք չենք ստեղծւած երբէք  
 „Մենակ անցկացնել մեր կեանքի օրեր,

„Բայց իրողութեան հետը դուք կարէ՞ք  
 Երբէք մի բանով չը համաձայնել:  
 „Բայց ասէք խնդրեմ... թողնենք Վալօդիա,  
 „Տուն պիտի երթամ մնացէք բարով:  
 „Իրողութիւն, մտածում է Նադիա,  
 „Դուք է թէ տանջի և ինձ օրերով:  
 „Բայց յայնժամ երբէք, իբրեւ թուլասիրտ,  
 „Ձեմ ձգի ես ինձ նրա ճիրանում,  
 „Եւ չար մարդերի ծաղրանքներից բիրտ  
 „Կը թագչեմ միայն սառ գերեզմանում:

## IX

Պետր Արզասիչ, միջակ Նաթանեան,  
 Շուկելով խնամքով տանից դուրս ելաւ,  
 Եւ ծանրութիւնը գործի ձանձրութեան  
 Նադիկենց տանը անցնել ուզեցաւ:  
 „Միշտ շաբաթներով նստիք սենեակում,  
 „Արիւնդ խառնիր, շփոթիր յուզւիր,  
 „Եւ անպատկառ խոսքի անդադրում  
 „Ձրիակերներից վերջը ընդունիր:  
 „Մինն իր տիկինին ուզում է դուր գալ,  
 „Իսկ միւս՝ դատարկ մի թափառական...  
 „Ո՞ր մինը ասել, որ մինը վայ տալ...  
 „Ձէ, պէտք է անել մի բան վերջնական:



„Եւ այս մտքերով հօր սիրած Պետիան,  
 „Եղբայրներիցը սաստիկ նեղացած,  
 „Մօտեցաւ շտապ տանը կիլիկեան  
 „Եւ սպասաւորին հարցրեց չարացած.—

„Տանն է տիկինը, տանն է բարիշնիան,  
 „Ո՛չ նոքա կառքով Լիկան գնացին“:  
 „Ի՛նչ ուշ. և ո՞ւմ հետ, գուցէ թէ միայն“.  
 „Նրանք ձեր եղբօր իրանց հետ առին“:

Պետր Բրգասիչ, կարծես այս խօսքից  
 Քարացած մնաց իր տեղում կանգնած,  
 Եւ բարկացած եղբօր արարքից  
 „Иди и женись“, մտքումն ասաց:

# X

„O! pardon, pardon, mademoisell!  
 „Այսպէս պատահեց, ի՛նչ պիտի արած.  
 „Զորս շաբաթ ամբողջ միշտ չը տեսնուել...  
 „Բայց թողնե՛ք, թողնե՛ք գործերն անցած:

Այո խօսքերով էր, որ պատասխանեց  
 Միջակ Նաթանեան Նադկիս ակնարկին,  
 Թէ ինչո՞ւ այնպէս կպել է տանից,  
 Կարծես մոռացել ամբողջ աշխարհին:

Եւ, հաստատ փաստով, Արտեմ Մինէչին,  
 Զեռքի շարժումով ճիշդ ապացուցեց,

Թէ այնքան գործեր ածած են զլիսին,  
 Որ քիչ է մնում ընկնի իր խելքից:

„Լաւ մտածեցէք, Արտեմ Մինէչի,  
 „Հարիւր մարդու հետ միշտ գործ ունենալ,  
 „Եւ օգնութիւն բնաւին ոչոքից  
 „Գէթ երկու խօսքով անգամ չստանալ:

„Է՛հ, անփութութիւն ծերուկ հայրիկի  
 „Գժւեցնում է ինձ, որ մէկն ասեմ.  
 „Հազար տեղ տւած, զիվ էլ նաղդ ոսկի  
 „Պիտի մի տարում ամէն հաւաքեմ:

Եւ ծանր ու բարակ աւօրեայ հարցեր  
 Քննում են խորը, ինչպէս փորձւած մարդ,  
 Եւ առևտրական օպերացիաներ  
 Զննում աշխուժով ջահիլ ու ծեր մարդ:

Հազիւ թէ խօսքը Գրքի մարդերի  
 Կարար զբաղեցնել մայր ու աղջկան.  
 Քաղաքավարի կարգերին գերի  
 Նայում են նրանց դէմքերի վրան:

# XI

„Ի՛նչ պառաւ, պառաւ խօսում է, մամա,  
 „Պետր Բրգասիչ իմ պապի՛ն հետ,  
 „Թէ պապան լինէր մի պառաւ դամա,  
 „Կը սիրահարէր միայն նրա հետ:



„Ասա՛, ինձ ասա՛, ուղիղ չե՞մ ասում։

„Բայց թէ որ դու էլ լսի՛ր, մամինկա,

„Կարողանայիր մի ծերուկ լինել...

„Воображаю ревность старика.

„Խա՛, խա՛, խա՛ մամա, ի՞նչ միտս ընկաւ,

„Երբ ծերուկ պատճառ ջգրած քեզ վրայ,

„Մագազինիցը տուն վերադարձաւ...

„Ասե՛մ ամեն բան նորից աշկարայ։

„Քիչ սարսաղ, սարսաղ խօսիր դու անվախժ,

„Հագիր շորերդ լացւիր ժամէ...

„Տե՛ս Վալօղիան էլ գալիս է շուտ շուտ.

„Գիտեմ պարերին մեզ պիտի տանէ։

## XII

„Մտի՛ր կուսանոց. որտեղից ք՞րտեղ,

„Մտքովս ընկաւ, լսիր Վալօղիա,

„Ի՞նչ պիտի յուզմունք և տանջանք զօրեղ

„Կը զգար խօսքերից այդ ՕՖելիա։

„Շատ սիրում եմ ես միայն այդ сцену-ն.

„Լսի՛ր, Վալօղիա, ինչդեմ կանգնեցէք.

„Ես դառնամ առ ժամ միայն ՕՖելիա,

„Իսկ գուք Համլետի խօսքը ասեցէք։

„Եւ դէպ կուսանոց դուք ինձ ստիպո՞ւմ էք,

„Որ ես հրաւիրեմ ձեզ նման միմիւր...

„Որ լիքը կեանքը, դուք ծիծաղո՞ւմ էք,

„Մնաս բարով ասի ուրախ աշխարհին։

„Այո՛, անպատ պիտի ես քաշեմ,

„Հեռու խաբուսիկ աշխարհի փայլից,

„Գուցէ թէ այն ժամ ես մինին գտնեմ,

„Որին ջերմ խօսքեր ասեմ ես սրտից։

„Հեռացրէք ձեզնից խաւար մտքերը...“

„Ասա՛ ինձ, ասա՛, պարոն Վադիմիր.

„Մտի՛ր կուսանոց և տանջանքները

„Սիրտդ կտրատող այնտեղում ցրիր։

„Բաւ է օրիորդ, և մի՛թէ այդպէս...

„Երկու խօսք միայն սպասում եմ ձեզնից.

„Բայց խօսք ջերմ սրտից եթէ կը ներես.

„Ես քեզ սիրում եմ, զնանք այստեղից։

## XIII

„Ժամը քանի՞սն է, իմ Անտուանետ,

„Լա՞ւ եղանակ է, զբօսնո՞ւմ են մարդիկ,

„Պատկած անկողնում իր „роза“-յի հետ,

„Գուվերնանտկայից հարցնումէ նաղիկ։

„Ուղիղ տաս և կէս, моя барышня,

„Պիտի վեր կենալ, լաւ եղանակ է...

„Что это у вас? опять собака?

„Այ՛ տես, Անտուանետ, ի՞նչ խորամանկէ՛ս։



Եւ խթեց շանը օրիորդ Կիլիկեան,  
Ծւաց կենդանին, արագ զուրս պրծաւ,  
Ահից սարսեցաւ խեղճ գուլերնանտիան,  
Սրտի ջղրիցը մի կուշտ լաց եղաւ:

Իսկ Նաղի'կ, Նաղի'կ, քրքիջը բերնին,  
Ծաղրում է անյագ սուր սուր խօսքերով  
Իրա սիրասթափ Անտուանտին  
Ռուսերէն խօսքով, քաղցր ջանգերով:

„Խա', խա', խա' ասա', իմ Անտուանտ,  
„Այժմ աւելի օստտիկ վախեցա՞ր,  
„Թէ 'րբ թփի տակից քեզ սիրող Ալբերտ  
„Յանկարծ անապաս վրադ յարձակեցաւ:

„Ալբերտ և շնիկ, ի'նչ նմանութիւն,  
„Խա', խա', խա', հոգիս ա'խ չը նեղանաս,  
„Բայց կարծեմ ձեր սիրտ յարաբերութիւն  
„Այն օրիցը յետ շուտ կտրեցաւ:

„Բայց ասա' խնդրեմ, առանց թաղցնել,  
„Որի՞ համար դու այժմ ապրում ես,  
„Կամ թէ քո մարած սէրը արթնացնել  
„Մի մի ժամանակ, ասա, փորձո՞ւմ ես:

„Օ', իմ օրիորդ, ա'խ ի'նչ պատճառաւ...  
„Եւ մի՞թէ հոգսը, ձեզ վրայ տածած,  
„Ձեր մօքի միջից շուտ անյայտացաւ:  
„Օ', խեղճ Անտուանտ, ծաղրանքի մատնեա՞ծ:

Եւ պառաւ հստաչ պառաւած սրտից  
Կարծես բեռներով զուրս է պրծնում...  
Օ', ցաւալի է, որ իր Նաղիկից  
Այդպիսի սուր սուր խօսքեր է լսում:

„Օ', իմ Անտուանտ, ա'խ դու լալիս ես.  
„Լալի դեռ լսիր, ես ոչ այդ մօքով  
„Անմեղ խօսքերը ասում էի քեզ.  
„Կամ ինչո՞ւ վշացնել աչեր արցունքով:

Պառաւած յուզմունք, ինչպէս թոյլ կրակ,  
Քաղցր խօսքերից շուտ անհետացաւ,  
Եւ պառաւ կեանքը ինչպէս մի վտակ  
Իրա առաջւայ ճամբովն ընթացաւ:

#### XIV

Եւ մինչ այս մինչ այն Պետր Արզասիչ  
Թեթեացրել է գործեր պատինի,  
Իմանալ կուղէ Գոմէրնանայից  
Իր մասին կազմած կարծիք Նաղիկի:

Բայց Անտուանտ պառաւ ու խարդախ  
Ձի ուղում ասել ոչինչ աշխարայ,  
Պետր Արզասիչ սրտով ոչ խաղաղ  
Յարձակում պստիկ եղբօրը վրայ:

„Բեզանից է, որ ես և ոչ մի բան  
„Ձկարողացայ մի ամիս անել.



„Ինչացո՞ւ ես դու, անմիտ անպիտան,  
 „Ի՞նչ ես խեղճ աղջկայ հետեւից ընկել:

„Ի՞նչ քո գործն է այդ, և ինչո՞ւ խօսքով  
 „Անպատշաճ ու բիրտ անպատուում դու ինձ,  
 „Կամ թէ մարդկային ո՞ր իրաւունքով  
 „Պահանջում ես դու հաշիւ ինձանից:

„Լսիր սիրում ես նրան, տրաքւիր,  
 „Պոկիր մազերդ ոսկիի համար,  
 „Կուզե՞ս, ինչ կասեմ, գնա՛ս պատկիր,  
 „Բայց ես չեմ տեսնում քեզ նրան յարմար:

„Եւ գուցէ կարծես, թէ 'ս անմիտ-անմիտ  
 „Պիտի ոտքերս նրանով կապեմ,  
 „Կամ ինչպէս անփորձ, յիմար, թուլամիտ  
 „Ուզում եմ նաղկի հետը պսակւեմ:

„Շատ կը սխալւես. ինձպէս մարդիկը  
 „Ձեն էլ մտածում շղթայել ոտքեր,  
 „Բայց թէ սէրի անմեղ հաճոյքը  
 „Ինչո՞ւ առաջին դէպքում չբաղել:

„Մենք լսիր եղբայր, քաղում ենք սէրը,  
 „Այսօր նաղիկն է, վաղը Կատիկը,  
 „Իսկ այնուհետեւ արեցէք ձերը—  
 „Ստացէք շլացնող դեղին ոսկիքը:

„Ես քեզ ցոյց կը տամ խօսքերիդ համար  
 „Թափառաշրջիկ, դու փուչ ձրիակեր,  
 „Եւ այդ խօսքերդ լրբացած յիմար,  
 „Փուշ դառած կ'ծակեն քո ճաղար աչեր:

„Молчи, а то я... քնած անպիտան,  
 „Հոտած գերեզման, փողերի գերի,  
 „Վրադ չի թքի նաղիկ Կիլիկեան,  
 „Ձի քսի ցեխը վրադ ոտքերի:

Եւ մեծ ախոյեան Պետր Սրղասիչ  
 Իրա եղբօր մէջ տեսնում է բաց բաց.  
 Վախում է զրկւել խռոր օժիտից,  
 Երազի մէջը սիրով փափապած:

„Այսպէս չի լինի. հարկ է վերջապէս  
 „Փորձառու ճամբով գործերը տանել,  
 „Եւ կատարեալ խելօք մարդու պէս  
 „Առանց կարմրել հօրն առաջարկել:

# XV

„Աղջիկն էլ իրա խօսքով հայրիկի  
 „Պիտի իմանայ գնալ իմ որդի,  
 „Տանջող ցաւերը սրտի նրա վէրքի  
 „Չպիտի անփոյթ խօսքով նորոգի:

„Քո մաքուր անունն ի զուր տեղը դուն  
 „Ուզում ես ցեխը ձգել կեղտոտել,



„Բարի հայրիկի անառակ որդուն  
 „Այդպէս դու ի զուր երես ես տեսի:  
 „Տես իմ դրութիւն, գուցէ թէ մեռնեմ,  
 „Լսիր խօսքերիս փայտալած իմ յոյս,  
 „Ուզում եմ պայծառ պսակդ տեսնեմ,  
 „Որ թեթևութիւն տւած լինեմ հօգուս:  
 „Օ', սպասիր, հայրիկ, ես աղաչում եմ,  
 „Ումի՞ մասին դու այժմ խօսում ես  
 „Կամ ինչո՞ւ տխուր խօսքեր լսում եմ,  
 „Որոնցով դու ինձ խիստ անպատուում ես:  
 „Մոռացիր ամեն, եկ համբուրեմ քեզ.  
 „Լսիր ինձ այժմ իմ անգին Նաղիկ  
 „Պետար Արզաւելին, դու ճանաչում ես,  
 „Տալիս է քո ձեռք քեզ սիրող հայրիկ:  
 „Ներիր ինձ հայրիկ, որ ես ուխտել եմ—  
 „Չպատկւել երբէք և ոչ մինի հետ.  
 „Կուսանոց մտնել սրտով ուզում եմ,  
 „Սիրով կընդունի ինձ սուրբ մայրապետ:  
 „Իսկ յիշատակը հօրդ յաւիտեան...  
 „Գուցէ թէ չարժէ՞ այդ քեզ ոչինչ բան,  
 „Կամ թէ շառաւիղ տանը Կիլիկեան  
 „Ուզում ես զլորել անդունդը մահւան:

„Ա'խ մամաշա ջան, սիրտս տրաքւում է,  
 „Օգնիր, ինձ օգնիր, ազատիր շուտով.  
 „Նախազգացումը ինձ պարզ ասում է.  
 „Ձեռն կարող ապրել նրա հետ անվրդով:  
 „Գնա մտածիր իմ անգին Նաղիկ,  
 „Լաւ կշռիր քեզ մէջ երկու հանգամանք,  
 „Թէ որոնք են լաւ, ապահով մարդիկ,  
 „Թէ վայելողքը լոկ նրանց փշրանք:

XVI

„Օ', Անտուանետ, թէ կարողանամ,  
 „Հէնց այս րոպէիս կը թռչեմ նրա մօտ,  
 „Եւ սրտիս ցաւը նրան կը բանամ—  
 „Ձեմ դադրի խօսել մինչև առաւօտ:  
 „Պէթ դու ասան ինձ իմ մաղմուկակ,  
 „Ի՞նչ պիտի արած, ան ես խեղճում եմ.  
 „Չուզեմ ես հիւանդ հօրս վշտացնել,  
 „Բայց և Վալօդին չեմ կարող մերժել:

Անհում է զրիչ գրում Վալօդին,  
 Թէ վաղ առաւօտ կսպասես մեզի,  
 Անպատճառ կըլինիք Բ. պարի ծայրին,  
 Երկու խօսք ունեմ ասելու քեզի:



XVII

(ՕՐԻՈՐԴ ԿԻԼԻԿԵԱՆԻ ԵՐԱԶԸ)

Արձակ ասպարէզ, փայլում է լուսին,  
Նոյն սարի կատար, կանգնած է Նադիան,  
Զրի հաստ սաւան իրա առաջին  
Ծածկել է ամեն ուրախ ծառաստան:

Եւ ոգիները ջրի խորերից  
Մամուկատ ափին վխտում են ուրախ,  
Եւ իր Վալօղիան նրանց ձեռքերից  
Առնում է ինչ որ ժպտով անվախ:

Յանկարծ թնդում է օդը որոտով,  
Մթնեց երկինքը ահա և Պետիան...  
Յարձակեց իրա Վալի վրա սրով...  
— Վայ Տէր իմ Ասուած, վեր թռաւ Նադիան

Կրկին նոյն պատկեր. սոս, խաղաղութիւն.

Ո Ք Ի Ն Ե Ր

Մենք բաղդաւոր ենք մամուկատ ափում  
Մեր սիրտը այստեղ ազատ է խաղում.  
Սանդարամետի շղթայի ձայնից,  
Կամ անպիտանի անողոր սրից  
Մեր սիրտը ահով երբէք չի զողում:

ՈՔԻՆԵՐԻՅ ՄԻՆԸ

Մենք բախտաւոր ենք. ջրի թագուհու  
Ապարանքներում անհոգ ենք խաղում,  
Ոսկիների տեղ նա մեզ ամեն օր  
Իր քնքոյշ ձեռքով զեղ է բաժանում:

Լուսն է խաւ չայն

— Հիւսեցէք պրծէք:

Ո Ք Ի Ն Ե Ր

Այս աջն մարդու բաղդի է հուս,  
Որ սէրի դէմ սուր տուց,  
Գերի անդարձ, գերի անցոյս  
Այն աշխարհին պարզեց,  
Որ մի սէրը կոպիտ սրտով  
Փշրեց այրեց նա անսանձ.  
Եղբոր արեան կարմիր շիթով  
Բիրտ մատերը նա լւաց.  
Եղբոր սիրած որոնելու  
Յանդեց նա այստեղ դալ,  
Բայց սէր բնաւ սպանելու  
Այստեղ ոչոքի չեն տալ:  
Նա մի սէրը այս աշխարհից  
Խլեց տարաւ յաւիտեան,  
Եղբոր սրտից արիւն ոթեց.  
Սէրը մատնեց կորստեան:



XVIII

„Հազար քաղցր օրեր և կեանք անվրդով  
 „Մաղթում եմ քեզի, իմ անգին Նազիկ,  
 „Ընդունիր խնդրեմ, անկասկած սրտով  
 „Քեզ սիրող Վալի այս երկու տողիկ:  
 „Առանց կասկածել կարող ես դու միշտ,  
 „Զմերժել ձեռքը իմ միջակ եղբոր,  
 „Հեռացրու քեզնից հազար ցաւ ու վիշտ,  
 „Լսիր խրատը քո ծերացած հօր:  
 „Եւ ինչ ենք կորցնում սրանում երկուսով:  
 „Պատկեր, պրծիր, իսկ այնուհետեւ,  
 „Իբրեւ տանու „ДРУГ“, աներկբայ յուսով  
 „Կարող ենք զբօսնել ազատ թե ի թեւ:  
 Զորս օր սպասելուց իր նամակից յետ  
 Այսպիսի մի թուղթ ստանում է Վալից,  
 Եւ ճրագի վրայ այրում այն անհետ,  
 Ուշաթափ ընկնում իր սրտի ջգրից:

XIX

Օ, թախիժ, թախիժ և դու ինչ ի զուր  
 Ուրախ վայրերը ապականեցիր:  
 Քանի մեղեդի, և որքան տխուր,  
 Թուլացած սրտից ան, զուրս նետեցիր:

Օրիորդ Կիլիկեան ժամերով նստած՝  
 Դուրս դալ չի ուզում իրա սենեակից,  
 Լսում անտարբեր հափնչի սիրած,  
 Զի գտնում բնաւ մինին կարեկից:

Եւ Սօփիկոյի պատկերը յաճախ  
 Նկարում է նրա աչքի առաջին,  
 Բիւրաւոր հառաչ, հազար ա'խ ու վա'խ  
 Նստած են նրա քնքոյշ այտերին:

Ահա կատարքը ծառերի կանաչ,  
 Պարթեւ անտառը ծածկւել է մէզով,  
 Նորանոր վշտեր հանգիստ ու կամաց  
 Շարժում են սիրտը նոր նոր յուզմունքով:

Շքեղ ալբօմը առնում է ձեռին,  
 Թերթում է կամաց փայլուն երեսքը,  
 Եւ անփոյթ հարցնում զուվերնանական,  
 Թէ որի նա խիստ հաւնում է տեսքը:

«Ահա այս պարոն, լսում է Նազիկ,  
 «Տեսնո՞ւմ էք աչեր, իմ հարսնապէշ,  
 «Очень ревнивый, хотя и старикъ,  
 «Իսկ սա իր կեանքում կնիկ չի սիրել:

«Ահա «փոփոխ» մի պարոն է այս.  
 «Տեսնո՞ւմ էք քնքոյշ ժպիտն երեսի,  
 «Իրա հաւանածի հպատակ, անաս  
 «Կանէ շուտափոյթ ինչ սիրտը ուղի:



«Իսկ սա տեղն ու տեղ միջակ Նաթանեան,  
«Գերի սենեակի, մարդերից փախչող,  
«Տեսէք, օրիորդ, և որքան նման,  
«Եւ ինչ անպիտան դէմք է այս վանող:

«Բայց ասա՛ ինձի, իմ Անտուանետ,  
«Որին սրանցից սիրտդ կը տայիր,  
««Եթէ ամենին կանգնած միմիանց հետ,  
««Բո սիրով յուզւած նրանց տեսնէիր:

«Արժէ՞, որ միտքս մաշեմ դրա համար.  
«Եւ հիմը ասէ՛ք, մեր ժամանակում  
«Կարող ենք գտնել ողջամբ մեղ յարմար,  
«Որին մեր սիրտը տայինք անտրտում:

Եւ հիաթափւած նա ամբողջովին,  
Անհանգիստ պառկում փափուկ անկողնում,  
Անիծում անզուսպ Նաթանովներին,  
Անցած օրերը մոռնալ աշխատում:

Իզուր Անանին խնդրում է նորան՝  
Կատարել իւր հօր վերջին խնդիրը,  
Թէ այդ արարքից հազար Կեդք վրան  
Կարող են տեսնել մարդոց աչքերը:

Նա անիծում է և մօրը սիրած,  
Ձի ուզում տեսնել ծերուկ հայրիկին,  
Եւ ամբողջ օրով սենեակում նստած,  
Նա լուռ նայում է Վալի պատկերին:

Ե Ր Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ւ Խ

Եւ մինչ այս, մինչ այն, օրերն անցնում են,  
Արտեմ Մինէյչի ոսկիք քամու պէս  
Առողջութեան հետ կորչում գնում են,  
Աստուած է վկայ յայտ չէ, թէ ինչպէս:

Ոմանք ասում են, թէ բժիշկների  
Շատ յաճախելուց նրանք պակսում են.  
Թէ լսենք պատում չար լեզուների,  
Գործակալտարների, կապեն, խժռում են:

Եւ յաճախ — յաճախ տանու քահանան  
Ել ու մուտ ունի այժմ նրա մօտ,  
Տալիս է նրան հոգու մանանան  
Երբեմն նստած մինչի առաւօտ:

Տիկին Անանը չափաւոր ծախսեր  
Սկսել է անել ամառանից յետ,  
Օրիորդ Նադիկ մաշելով աչեր,  
Ուզում է դառնալ աղջիկ վարժապետ:

Մաշում է թերթը հայոց զրբերի,  
Հարկաւոր խօսքեր գրում տետրակում,  
Խնդրում օգնութիւն ծերուկ տէրտէրի —  
Հայոց դպրոցում տեղ է որոնում:



Անցաւ հինգ տարի, մի բոլոր շրջան,  
Տարաւ անդունդը ժպտող օրերը.  
Հին փառքից միայն խօսքը Կիլիկիա,  
Նորոգում է լոկ Նազկի յոյսերը:

Եւ նա սիրում է երգը Կիլիկեան  
Երգում է այն միշտ հպարտութիւնով,  
Եւ զիմ Կիլիկիա՝ կտորը նորա  
Շեշտում է ձայնի ուժեղ ցայտումով:

Օրիորդ Կիլիկեա՛ն. եւ ո՛վ չի ուզի,  
Որ իր մականունն այսպէս որոտայ,  
Եւ ճառադալթը կրթութեան լուսի  
Փեսացուներին իրա մէջ ցոյց տայ:

Այս չէ ամէնը. իմ օրիորդը  
Շնորհալի է և պերճ խօսքերի մէջ,  
Եւ հայկական նա խօսքի խորթը  
Ջնջում է սէրի նամակների մէջ:

Գիտէ նա թիւը Բաֆֆի մահւան,  
Կամ երբ Պատկանեան եկաւ մեր քաղաք,  
Պահում է իրա սեղանի վրան  
Առանց կտրտիլ «Ոսկի աքաղաղ»:

Գիտէ նա պահել իրեն շատ բարձր  
Կաւալերների պատուով շրջանում,

Երբեմն էլ յոնքը կիտել շատ թանձր,  
Երբ կօմալլիմենտը նա չի հաւանում:

Սիրում է նա խիստ նոր բժիշկներին,  
Հոգ չէ թէ կառքով դեռ նա չի զբոսնում,  
Բայց հօ կարող է յաճախորդներին  
Ասել, թէ սիրտը ինչպէս է տրոփում:

Կամ պօղրուզներից խիստ ծածուկ պահել  
Ատլաս փառակազմ յիշատակարան,  
Ու ճիշդ թւերով, ճիշդ արտայայտել  
Տարին ամիսը նրա աւարտման:

Երբեմն փակւում մենակ սենեակում  
Ու զգացւած սրտից սէրի խօսքերը,  
Ուղղած բժշկին՝ դրում տետրակում,  
Նորոգում սրտի մարած վշտերը:

Եւ տանջող թախիժ գունատ երեսի  
Երբեմն թափել թանաքի սևով,  
Մզել ցաւերը սիրասթափ սրտի  
Ոտանաւորի թեթեւ տողերով:

»Ես հիւանդ եմ, բժիշկն ասեց,  
«Թէ այդ քու սև դարդիցն է,  
«Հոգիս, ասի, խիստ յուզւում է,  
«Ասեց, սրտի սէրիցն է:  
«Թէ ուզում ես, ասեց, հոգիս,



«Մի երկու օր դու ապրես,  
«Լսիր խելօք երկու խօսքիս.—  
«Աշխարհում բան չը սիրես:  
«Ձէ, ասացի. ո՞ր խելօքը  
«Կուզէ թաղւել կենդանի,  
«Եւ բաց աչքի իր բոլորքը  
«Տեսնի վիհը տապանի:  
«Թէ ուզում ես, ասեց, հոգիս,  
«Մի երկու օր դու ապրես,  
«Լսիր խելօք երկու խօսքիս.—  
«Աշխարհում բան չը սիրես:

Երբեմն նստած մի բօման ձեռին,  
Աչքերը ձգում ողորկ հայելուն.  
«Ա՛խ, տէր իմ Ասուած, վայր իմ գլխին,  
«Անցել է արդէն կեանքիս վառ գարուն:

«Բայց ի՞նչ յուսահատ տխուր կացութիւն,  
«Բնւ է վերջապէս տանջւիլ օրն ի բուն.  
«Եւ տանը մնալ. ի՞նչ չիմարութիւն,  
«Հերիք անցկացնեմ գիշերն անքուն:

«Ա՛խ, մամաշա ջան, ասում է մօրը,  
«Ախր ի՞նչ է ասում ծերուկ պապիկս,  
«Մինչի ո՞ր տարին, մինչի ո՞ր օրը  
«Ուզում է թողնել նա ինձ անպաշտպան:

«Կրեմ գլուխը նրա պէս պապիկի,  
««Ասում է «ախ ով պառաւ Անանը,

«Նեժնի Նադիկա մի պալկովիկի  
««Աղջիկ պիտ լինէր և ոչ նրանը:

«Ինչ ունէր, չունէր, աշխարհին բաժնեց,  
«Քօռ ու փուշ արաւ կայք ու կայանքը,  
«Իսկ խեղճ Նադիկիս, պառաւն արտասուեց,  
«Ձուզեցաւ շինել բահր ու բաժինքը:

Մի տարի առաջ պրօսպեկտի վրայ  
Մի կին խելագար անցնում էր շտապ,  
Դզդզած հերքը ուսերի նրա  
Թափւելին խառը, անփոյթ ու անկապ:

Յանկարծ կանգ առաւ. «Վալիա՛, ա՛ Վալիա»,  
Դիմեց պատուած շորով տղամարդուն,  
«Ինչպէս է ապրում ձեր քոյր Սօֆիան  
«Отъ Надь поклонь, երբ կը գնաս տուն:

Միջակ Նաթանեան կարէ պարծենալ  
Անթիւ ոսկիքով իրա սեփական,  
Կարէ միշտ հպարտ ամեն տեղ մանգալ,  
Թւիցը բռնած իր սիրուն կնկան:

Ողորմի հոգուն Արտեմ Մինէջի  
Եւ ազգասէր արզաս Նիկիտչի.  
Երկու պառաւին նոյնպէս ողորմի—  
Ասուած նրանց հոգիքը փրկի:

**Վ Ե Ր Զ**



ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

# ՅԱԻԵԼԻԱԾ

(ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԻՒՆՆԵՐ)



ՄՏՔԵՐ

Խաւար մոքերը սրտիս ծանրացրած,  
Մաշում են միտքս կաշկանդում հոգիս,  
Եւ յիշողութիւնն օրերի անցած  
Կրկին ու կրկին արթնացնում վիշտս:

Ազատիր, Աստուած այս կապանքներից,  
Որ ինձ ստրկացրել գերի են արել  
Եւ խաղաղութեան յուսոյ աղբիւրից  
Վազեցրու ջուրը վշտերս ցրել:

Թէ որ ՈՒԶՈՒՄ եմ

Թէ որ ուզում ես հոգուդ լարերը  
Զօրեղ հնչեցնեն երգն ազատութեան,  
Թո՛ղ դու, քաղաքը՝ ախտով վարակւած՝  
Ընկի՛ր ժպիտով գիրկը բնութեան:

Թէ որ ուզենաս անդաւ սէր երգել,  
Թո՛ղ կեղտոտ մարդիկ, թո՛ղ նոցա կոււել,  
Քանց կուսի աչերը՝ սևուկ աչերը,  
Ո՞վ կարէ քեզի սիրով հմայել:

Թէ որ ուզում ես պարզութիւն երգել,  
Գնա՛, անտառի վճիտ աղբիւրը.  
Նորա մամռապատ ակունքի մօտին  
Սիրով վխտում են պարզ մուսաները:



Ո՞Վ, ԱՐԵՅ

Թաւուտ անտառի ամբիժ կուսութիւն  
 Ո՞ր մահկանացուն յանդգնեց խախտել,  
 Այն որի՞ ձեռքն էր, որ համարձակեց  
 Սրբազան ծառը արմատից կտրել:

Վճիտ աղբիւրի ջինջ յստակութիւն  
 Ասացէք, ո՞վ է խառնել պղտորել:  
 Այն ո՞ր յանդուգնը համարձակել է  
 Քարի կտորը նորանում նետել:

Ասացէք, ո՞րը այս հակայական  
 Շքեղ պալատը աւերակ արեց,  
 Ո՞ր անպիտանը աշխարհի փառքը  
 Մարդոց աչքիցը խլել յանդգնեց:

Իսկ այս իմ սի՞րտը, հոգուս ընկերը,  
 Որի՞ նենգ մատը խառնեց խոցոտեց,  
 Որի՞ վատ խօսքը, որի՞ գնտակը  
 Վաղեմի վէրքը նորից բաց արեց:

ԻՄ ՏԱՃԱՐԸ

Դարեւոր կաղնու բունին ես յենւած  
 Լսում էի երգը ուրախ բնութեան,  
 Եւ խոխոջիւնը հեռաւոր գետի  
 Բերում էր ձայնը մռայլ տխրութեան:

Հեռուն նայում եմ, վիթխարի անտան.  
 Կուրծքը մեկնելէ. ան կուսի կուրծք է.  
 Թողէք ինձ մօտնալ. նա անարատ է.  
 Ես այն սիրում եմ, մի՞թէ դա մեղք է:

Բայց դու հիւրասէ՛ր, սրբազան կաղնի,  
 Ինչո՞ւ միայնակ, ինչո՞ւ անշատուած,  
 Հպարտ կանգնել ես անտառից հեռու,  
 Ինչո՞ւ զարթեցրիր վշտերս ցրած:

Դէհ, մնաս բարով. ուզում եմ գնալ  
 Դէպի սրբազան անտառի խորքը,  
 Դէհ, մնաս բարով վշտերիս ընկեր,  
 Բայց մի մոռանար դու իմ այս խօսքը:—

Երբ կը գայ քեզ մօտ մինը ինձ նման,  
 Որ կուզէ ցրել վշտերն ամբարած,  
 Ա՛խ չը կաշկանդես դու նորա սիրտը,  
 Նորան քո մօտը չսպահես կապած:

Դու մի՛ նախանձիր, որ նա ուզում է  
 Ասածու տաճարի խորքն ապաւինել.  
 Սիրուն սոխակի երգին ձայնակցած  
 Ազատ Ասուածը նա փառաբանել:

ԾԱՊԻԿ

Ես գնում էի դաշտի միջով  
 Պարզիկ առւի ափերով,





Ծաղիկ տեսայ զբախտայինէր,  
Զուգւած անթիւ ցօղերով:

Բայց մնայլը կատաղ ամպի  
Գուժեց զայլը փոթորկին,  
Եւ ծաղիկս գունաթափւած  
Թեքեց զլուխը. վա՛յ ծաղկին:

#### ԱՁԵՐ ՍԻՐՈՒՆ

Աչեր սիրուն, որ նայում էք  
Պարզ երկնքի աստղերին,  
Ինչե՞ր արդեօք մտածում էք,  
Ասէ՛ք, ո՞վքեր վշտացրին:

Ես տեսնում եմ առկայծւող  
Սիրոյ կայծեր նոցանում,  
Եւ արցունքը զըլղըլացող  
Նրանց մարել է ուզում:

Էլի մի զարկ սրտի ուժգին  
Եւ ցամքում է հեղուկը,  
Էլի մի խօսք այրւած սրտին  
Վառվըռում է կրակը:

#### ԿՈՐՅՐԱԾ ՓՈՒՆՁԸ

«Թամար աղջիկ, ինչո՞ւ այդպէս  
«Թառամել է զո՞րք վարդի:

«Ինչո՞ւ հողիս, էլ ժպիտը  
«Չի զարդարում երեսդ:

«Թէ ալիցը, թէ կարմրիցը,  
«Թէկուզ դիպա-զառիցը  
«Կտրել կը տամ ես ջհուդին,  
«Ձեռդ քաշիր դարդիցը:

««Ձուզեմ ալը, չուզեմ դիպան,  
««Դրանք չեն սրտիս վրդովում,  
««Ա՛խ, երազը այս գիշերւայ  
««Հողիս տանջում է մաշում:

««Մեր պարտէզի չինարի տակ  
««Նստած ծաղիկի՛ն փնջում,  
««Քեզի համար իմ սիրական  
««Սէրի խաղեր յօբինում:

««Եւ ջհուդը՝ երկար միրքով  
««Եկաւ առաջս կտրեց,  
««Սէրիս փունջը նա անմուռնչ  
««Ուժով ձեռիցս խլեց:

««Ես լաց եղայ, շատ լաց եղայ,  
««Բայց ջհուդը չամաչեց,  
««Եւ իմ սիրուն փնջիս տեղը  
««Ալմազ աստղը զլորեց:



ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻՅ

„У моря видѣлъ дубъ зеленый,  
Подъ нимъ сидѣлъ, и коть ученый  
„Свои мнѣ сказки говорилъ.  
„Одну я помню-сказку эту  
„Повѣдаю теперь я свѣту“.

А. С. Пушкинъ.

„Գնա որդի այն աշխարհը. քո հանգուցեալ մօր մատից  
„Աղամանդէ մատանիքը բեր ինձ միւս աշխարհից:  
  
„Ասի՛ր նրան, որ Թաղւորի սպիտակել է դիւի մաղը,  
„Օր ու գիշեր շարձարում է նրան մահի երազը:  
  
„Ծովի կոյսը այդ մատանին պահանջում է որպէս վարձ,  
„Որ դեղ անէ, դարման շինէ. քո հացրիկիդ ծերացած:  
  
„Խղճա՛ հացրիկ, ինձ մի ղրկիր՝ այն աշխարհը այսպէս վաղ.  
„Գլթա խնդրեմ, մօրս մօտից ես չեմ կարող դառնալ, ան:  
  
„Ես կը խնդրեմ ծովի կուսից, որ դեղ անէ քեզ անվարձ,  
„Յանուն սէրի, որ մեր մէջը վաղուց ունինք մենք կապած:  
  
„Հացրիկ, խղճա՛, ինձ մի ղրկիր այն աշխարհը անծանօթ,  
„Յանուն սէրի ծովի կուսից դեղ կը բերեմ առաւօտ:  
  
„Օ՛, վատ տղայ, դու խոցում ես հօրդ սիրտը խօսքերով,  
„Ծովի կոյսը ծովի տակը սպասում է ինձ օրերով:

„Նա իմն է, Օ, վատ որդի, կորեր, գնա՛, մօրդ մօտ,  
„Թէ կարացար մատանիքը բեր ինձ մինչի առաւօտ:  
  
„Հացրիկ, խղճա՛, ես խեղդում եմ ծովի կոյսի սէրիցը,  
„Հացրիկ, սպասիր, մատանիքը բերեմ մօրս մատիցը:  
  
Այնտեղ հեռում, սարի ետեւ, ուր աշխարհն է վերջանում  
Եւ դժոխքի սև առկերը գալիս այնտեղ կուտակում,  
Ատում են որ երկու զետեւ համր առաջ են վազում:  
  
Երբեմն այնտեղ չար վհուկը ափին նստած սպասում է,  
Ամուր Թեկով նա անմոռնչ բաղդի կապը հիւսում է,  
Կամաց-կամաց ջրի կուսին իր արարքը պատմում է:  
  
Պատահում է չքնաղ կոյսը զուգած, հագած, գետակից  
Դուրս է գալիս կողքին նստում համբաւ ստանում աշխարհից.  
Եւ երբեմն իբրև ընծայ տալիս վզի հիլունքից:  
  
Երբեմն էլ պատահում է, որ գալիս է հարուստը  
Կորցրած ոսկու կամ ալմազի իմանալու Թաղուստը.  
Լողանալով նա մի հրաշքով գտնում է իր կորուստը:  
  
Երկու աչքից այդ զետեւը կաթ-կաթ Թափւում են սարից.  
Սարի ծալին ծեր Թաղւորը մորմոքւում է դարդերից,  
Լալիս, լալիս կորցրած փառքը չի ստանում ոչոքից:  
  
Նրան անիծեց ջրի կոյսը յաւէտ լալ ու հառաչել,  
Որ իր որդուն չխնայեց այն աշխարհը ուղարկել.  
Ծօրը տարած մատանիքը մինչ առաւօտը բերել:



Ել յետ չեկաւ սիրած տղան, կոյս մնաց սարսափած,  
Եւ ճիւղտը կախարդական ձեռքն առաւ ու ասաց.  
«Սարի ծայրին ծեր թագ'ւորը լալով մնաց միշտ նստած:

Սե չէ ջուրը և ոչ սղտոր, դարդի գոյնով է ներկած,  
Որովհետեւ չար սրտաւը դարդոտ տեղից է եկած,  
Որովհետեւ այդ ջրերը դարդոտ աչքից են թափւած:

### ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՐԵՄԱՆԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Հող չէ թէ քամին դուրսը շուում է,  
Հող չէ թէ կայծակ շանթում է սարեր,  
Թէ մթին ամպը երկնից շփոթւում է,  
Թէ խորտակւում է քարւանն անվեհեր:

Մի մազ էլ չարժէ սարդարի համար,  
Թէ Զանգին փրփրած արագ վազում է,  
Սիրող աչերից արցունքն անհամար  
Թէկուզ շատ հեռու խլում տանում է:

Բաղդաւոր է նա իր ապարանում,  
Սէրի վառ խանդը զրգուում է հողին,  
Եւ ստրկացրած իր բազուկներում  
Սղմում է սէրը նա ուղած ժամին:

Այստեղ մարմար աւազանը  
Լողարանում գործում է,  
Կախարդական նուրբ սաւանը  
Խանդոտ մարմին ծածկում է:

Եւ ցոյ կեանքը հարեմական  
Շարժում է մեծ եռանդով,  
Ու ամբարւած կիրքն առնական  
Ժայթքում սրտից բեռներով:

Եւ սարդարը երջանիկ է  
Հուրինների երամում:  
Ախտոտ կրքով նա դիտում է  
Խանդոտ խայթքն աւազանում:

Ու խայտում են տիկիները  
Պարզիկ ջրում անդարդում,  
Արագ-արագ սե աչերը  
Սարդար աղին զարձնում:

Մինչևի որ մի ծոց նիրհում  
Ծանրանում է աչերին,  
Եռող կիրքը մի վայրկեանում  
Հասնում է իր կատարին:

Ու մի քնքոյշ այդ երամից  
Սարդարին մօտենում է,  
Տաք համբույրը շրթունքներից  
Հաւաչով ընդունում է:



ԹԷ ՈՐ ԿՐԾՔՈՒՄՍ ՄԻ ԱՆԱՐԱՏ ՍԻՐՏ

Նւէր „Մշակ“-ի մեծ. խմբագիր դ-ր Գրիգոր Արծրունուն

Gottlob! dass ich singen und preisen kann,  
Zu singen und preisen den braven Mann.  
g. a. Bürger

Թէ որ կրճքումս մի անարատ սիրտ  
Բարասում է միշտ Աստծու կամքով,  
Կարեմ անկասկած հալածել ես բիրտ  
Եսապաշտութիւն անսահման կամքով:

Եւ վանել հեռու ստորաքարշ արարք  
Ամբոխի անմիտ ցաւոտ սրտերի,  
Սեւացած նախանձ, կուրութիւն անարգ  
Սողացող կեղտոտ շահամոլներ:

Եւ մի դրօշակ պարզել միշտ անվախ,  
Իբրեւ մի կոթող յաւիտենական,  
Պաշտելու նրան, իբրեւ անխարզախ  
Առաջնորդ կեանքի միշտ անսպական:

ՈՎ. ՄԱՂԴ. ԼՍԻՐ:

ՈՎ մարդ լսիր, չարքաշ կեանքը թէ որ սիրտդ նեղացնի,  
Սառը հողում միայն գիտցիր, քո սեւ դարդը կանցնի:

Սուտ է բոլոր, թէ մարդիկը այնքան սիրում են իրար,  
Որ կարող են դարման անել միմեանց դարդին անհամար:

Եւ այս կողմը նախատական ի զուր տեղը չհայհոյես.  
Լսիր, հողիս, և համոզւիր,—Փրկչի առաջ ոչինչ ես:

Այ՛ո, խիստ է այս աշխարհի վարդի թիւը անհամար,  
Բայց կրկնակի փուշ ու տատակ ծածկում են մեր ճանապարհ:

Որին վարդը, որին փուշը, այս է դրած օրէնքը,  
Շատ թոյլ կըլնի այս փոխելու կեանքի բոլոր քո զէնքը:

Հողիս, լսիր, չարքաշ կեանքը թէ որ սիրտդ նեղացնի,  
Աստծու զրկում, միայն գիտցիր, քո սեւ դարդը կանցնի:

Բայց երբ կը գայ ժամանակը՝ քո աչքերը փակելու,  
Լաւ մտածիր, ինչ ես արել, կամ ինչ ունի՛ր անելու:

Վայ ու ցաւ քեզ, թէ քու կոչում ուրացելես դու անսանձ,  
Ո՛հ չեա կարող երկնքումը ունենալ դու գէթ մի փանձ:

Կ Ա Տ Ա Կ

«Տեղերի գէնը սովորականն է»  
Ա.Փեշա:

Մի օր նստած Մուսայիս հետ խիստ շատ սիրով խօսում եմ,  
Մի մարդ եկաւ կողքիս նստեց թէ հարկաւոր գործ ունեմ:

Ասի յետոյ, չարաւ մարդը և ինձ տեղ մի մատնան,  
Թէ տիրացու զրիւր այստեղ պարտապանիս նիսիան:

Ասի յետոյ, նա չարացաւ, տեղ զրիւս կտրեց  
Եւ Մուսայիս իր արարքով սենեակիցս փախցրեց:



Մուսան, այժմ մեծ գանդառուեմ այս անօրէն մարդուցը,  
Է՛հ, ի՞նչ ասեմ, Ասուած կորի ողորմին սե հոգուցը:

ՊՕԷՏԻ ԴՐԱՍՏԻ ՕԹԵԻԱՆԸ

Մի սիրուն օր հրաւիրեցայ Մուսայից,  
Տեսնել դրախտի օթեանը պօէտի:

Մառախուղէ շատ ճամբաներ կտրելից,  
Ախ ու վախով հասանք տեղը այն կէտի:

Ու գահոյքը չէր փղոսկրից, ոչ ալմազից, փիրուղից,  
Ոչ էլ ծովի մարգարտից, ոչ մի անգին մետաղից:  
Երեք թարմ ոստ փաթաթեա՛ծ ին կուսի սաթէ մազերով,  
Այն գահոյքի ոտքերն են, մշտադալար կանաչով:

Ու նստարանն այն գահոյքի ծածկեա՛ծ էր թարմ կանաչով,  
Եւ հովանին՝ պարզ երկնքի ներկած՝ պայծառ կապուտով:  
Սուրբ Սերովբէն պահպանում է մուտքը այն օթեանի,  
Ու աստղերը զարդարում են ճամբան խաղաղ այն վայրի:

Սուրբ Քերովբէն, թռչունները երանական այն դրախտի  
Մի զըլգըլան փափուկ ձայնով հնչեցնում են մեղեդի:  
Երկու սկիհ՝ խիստ նորը կերտեա՛ծ՝ դրած էին մէջտեղում:  
Մինում գինի, միւսում վառօդ անուշ հոտ՝ ին տարածում:

Սանտարամետի որոտը շատ խուլ լսում է հեռում,  
Թշնամու դէմ մղած մարտն է այդ անդադար յիշեցնում,  
Նուրբ օղեղէն օթեանում նստած էր ծեր պօէտը,  
Ու իր աշխոյժ աչերի մէջ վառւում էր սուրբ կրակը:  
Եւ ես տեսայ, համբուրեցի սուրբ ձեռքը,  
Նա ինձ ցոյց տւեց իրա սրտի խոր վերքը:

N N-ԻՆ

Ինչպէս մի ծաղիկ, կտրեա՛ծ թփից,  
Թառամում ես դու սուրբ անսպասում,  
Հեռու աշխարհի մեղսալիր սէրից,  
Շիջած աչերդ դէպ երկինք ուղղում:

Հոգու փրկութիւն, թէ դառն ցաւեր  
Հացում ես նրանից անսիրտ մարդերին,  
Թէ մարած սէրիդ քաղցր ցնորքներ  
Արթնացնել նորից խնդրում ես Տէրին:

Բաց լսիր, զանգը հրաւիրում է քեզ  
Դէպի սուրբ տաճար փառաբանութեան,  
Դէթ մաղթանքներում չանես ինձ անտես,  
Ի սէր անխարդախ սուր Ասուածութեան:

15 N N-ԻՆ

Բարե քեզ բարե ինտել՝գենտ աղադ,  
Երբեմն աթէխտ, այժմ կեղծ դէխտ,  
Ոչ արիստոկրատ, ոչ թունդ դեմոկրատ,  
Ոչ սովորական դու չար գիմնադիտ:

Այս անգամ այսքան վաղեմի ծանօթ,  
Փոքր համբերութիւն ունեցիր խնդրեմ,  
Մինչև պատկերդ գրչով ոչ կրթու,  
Սահուն տողերով առաջդ դնեմ:



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.


Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.





ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

Կարելի է ստանալ գրավաճառանոցներում և հեղինակից այս հասցեով՝ Тифлисъ, Авлабартъ, Константиновская ул., № 8, учителю Геворгу Теръ-Гевондяницъ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0349811



